

Չեզոքությունը որպես համոզիչ առասպել. «Սև այգի» գրքի խմբագրված նոր տարբերակի հրատարակումից հետո Թոմաս դե Վաալի բացահայտ և թաքնված կողմորոշումների վերլուծությունը Լեոնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ

Ձեկույցի սեղմագիրը անգլերեն

«Սև այգի. Հայաստան- Ադրբեջան, պատերազմի և խաղաղության միջով» գիրքը Լեոնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող լավագույն ուսումնասիրություններից մեկն է: Գրքի հեղինակ Թոմաս դե Վաալը աշխատում է Կարնեգիի անվան Միջազգային խաղաղության հիմնադրամում: Քրիստիան Կոլտերը իր հետազոտության շրջանակներում իր վերլուծությունն է առաջարկում գրքի անկողմնակալ կամ չեզոքության շուրջ: Քրիստիանն առաջ է քաշում հետևյալ հարցադրումները՝

1. Կարո՞ղ են դե Վաալի պնդումները արդարության կոչ անել՝ ճշմարտությունն ուսումնասիրելու պատրվակով, ինչը կարելի է գտնել է ազգային առասպելներում,
2. Եթե ոչ, ապա ի՞նչ է անում «Սև այգի» գրքի հեղինակը:

Օրինակներ, որոնք ապացուցում են գրքի չեզոք դիրքորոշման խախտումը

1. **Ալբանիայի տեսությունը.** Այս տեսությունը վաղ քրիստոնեական հուշարձանների մեծ մասը ներկայացնում է որպես ադրբեջանական, նկատի ունենալով, որ հայերը այդտեղ բնակություն են հաստատել շատ ավելի ուշ (18-րդ դարից առաջ), երբ ադրբեջանցիները արդեն պահանջներ էին ներկայացրել այդ տարածքների նկատմամբ, այդ ներառյալ՝ Լեոնային Ղարաբաղի, Ջանգեզուրի, Երևանի, Սևանի և այլ տեղանքների: Տեսությունը տարածվել է ողջ Ադրբեջանի տարածքով, սակայն՝ ոչ երկրի սահմաններից դուրս (էջ 3): Այնուամենայնիվ, տեսությունն անտեսում է այն հանգամանքը, որ Հայաստանը և Վրաստանը արդեն Քրիստոնեություն են տարածել Ալբանիայում դեռևս 4-րդ դարից ի վեր:
2. Լեոնային Ղարաբաղի պատմական ժողովրդագրությունը բացահայտ ներկայացված չէ գրքում: Դե Վաալը Երևանի թուրքախոս մուսուլմաններին (սալավիտներ) անվանում է ադրբեջանցիներ: Նա նաև ասում է, որ հայերը հաստատվեցին Լեոնային Ղարաբաղում 1820-ականներին: Հեղինակը բացատրում է, որ 1830-ական թվականներին

ընդամենը 19.000 հայեր էին ապրում Լեռնային Ղարաբաղում, չի նշում, սակայն, թե ինչպես Իբրահ Խանի օրոք տարածված համաճարակները, աղքատ բերքահավաքը և ճնշող քաղաքականությունը ստիպեցին հայերին լքել տարածաշրջանը:

3. Դե Վաալը նշում է, որ Ադրբեջանի հանրապետությունը դեռևս փորձեր է անում էթնիկապես մաքրել երկիրը, այդ թվում՝ որոշ տարածքներ (էջ 8):

Գրքում հայտնաբերված այլ անհամապատասխանություններ. Սումգայիթի ջարդեր

Դե Վաալը սատարում է ադրբեջանական տարածված կարծիքը, որ Սումգայիթի իրադարձությունները ադրբեջանական կողմից ինքնապաշտպանական քայլ էին հայկական կողմից արդեն իսկ գոյություն ցուցաբերված բռնության պատճառով: Նա համոզված է, որ հայկական տարածքներից ադրբեջանցիների վտարումը տեղի է ունեցել 1987 թվականին /Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդրի առաջացումից հետո/:

Սումգայիթի դեպքերի բացատրությունը՝ էջ 9-14:

Կարծիք Ստեփանակերտի և Խոջալուի մասին

Դե Վաալը դադարեցնում է դարաբաղյան պատերազմի ժամանակագրությունը, ինչը տպավորություն է ստեղծում, որ Հայաստանն առանց պատրվակի հարձակվում է Խոջալուի վրա (էջ 17):

Մինչ Ադրբեջանը մեղադրում է Հայաստանին ցեղասպանություն իրականացնելու հարցում, խոսքը Խոջալուին հասնելուն պես, *ցեղասպանություն* տերմինը կորցնում է իր նշանակությունը համաձայն ցեղասպանության միջազգային հետազոտությունների, և ակնհայտ է դառնում, որ մասնավորապես Խոջալուն այդ դեպքը չէ (էջ 15):

- Եղեռնը նախագծվում է մանրամասնորեն
- Նպատակը մի ամբողջ էթնիկ խմբի բնաջնջումն է:
- Պետք է տրվի սոցիալական խմբի անհամաչափ խոցելիության աստիճանը
- Արմատական գործողություններ

Դե Վաալը նշում է՝

1. Հայերն իրականացրել են ամենադաժան հարցակումը Խոջալուում
2. Քաղաքացիների դեմ իրականացրած վայրագությունները եղեռնի տարրեից մեկն է (էջ 21):

Խոջալուի դեպքերը ցեղասպանություն կոչելը ինքնանպատակ է դարձել Ադրբեջանի համար. այն բնութագրում է ադրբեջանցիներին (էջ 23):

Խոջալուի դեպքերի բացատրությունը՝ էջ 15-24

Կովկասի Հիրոսիման

Դե Վաալը համեմատում է ադրբեջանական Ադդամ քաղաքը Հիրոսիմա քաղաքի հետ՝ նշելով, «*աչքերս հառել էի շուրջս փոված փոքրիկ Հիրոսիմա քաղաքին: Ադդամն ուներ հիսուն հազար բնակիչ: Այժմ այն միանգամայն դատարկ է: 1993 թվականին, երբ հայերը զավթեցին քաղաքը, հետզհետե դատարկվեց յուրաքանչյուր տուն և փողոց: Փուշն ու տատասկը շրջապատել էր դատարկ տներին: Մինարեններից նայելով դատարկ քաղաքին, ես կրկին սկսեցի մտածել այս հայտնության պատճառների մասին* (էջ 25-27)»:

Դե Վաալը նկարագրում է դարաբաղյան հակամարտության վիրավորներին ու զոհերին

Սև այգու հեղինակը կարծում է, թե միջազգային հանրությունը բավարար կերպով չի պատկերում Ադրբեջանի՝ զոհի դերը, ինչպես նաև Հայաստանի օրինազանցությունը:

Օրինակ՝

1. Սովետական ժամանակաշրջանի խտրականությունը. Հեղինակն ընդգծում է ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական իրադրությունը: Նա շրջանցում է թեմայի վերաբերյալ կատարված փաստարկված վերլուծությունները և մի շարք հարցերի պատասխաններ, մասնավորապես, թե արդյո՞ք Հայաստանի դարաբաղցի ժողովուրդը ենթարկվել է խտրականության ընդդեմ ԼՂԻՄ-ի (էջ 28):
2. Փոխադարձ վտարումներ. Հեղինակը բազմիցս ընդգծում է, որ ադրբեջանցիներին ոչ ոք չէր պարտադրել լքել իրենց հողերը բացի հայերի կողմից ուժի կիրառման դեպքերի: Միննույն ժամանակ Դե Վաալը մոռանում է կոնկրետ օրինակներ տրամադրել հայերին՝ Ադրբեջանից վտարելու մասին (էջ 29):

3. Ջենքեր և մեթոդիկա. Դե Վաալը նշում է, որ 1994 թվականին Հայաստանի հաղթանակի և Ադրբեջանի պարտության հետևում առկա էր երեք գործոն՝ ա. Ադրբեջանի քաղաքական և ռազմական քառսը, բ. ռուսների մեծագույն աջակցությունը հայերին, գ. հայ ժողովրդի կովելու գերագույն հմտությունները (էջ 30-32):

Վերջաբան

Դե Վաալը չարաշահում է չեզոքությունը, այնուամենայնիվ երբեմն պատահաբար նա օգտագործում է բովանդակության ենթատեքստին անհամապատասխան փաստեր: Ողջ ուսումնասիրությունը կառուցված է փաստերի վրա: Հետևաբար, իմաստ չունի եզրակացնել, արդյոք Դե Վաալն իր գրքում հետապնդում է քաղաքական կամ անձնական շահ (*հայերը հանդես կգան հիմնականում դրական լույսի ներքո կամ սխալմամբ կպատկերվեն որպես զոհ, և այլն*), կամ ճշմարտությանն ուղղված տեղեկություն (էջ 35):

Պոստմոդեռնիստական ճշմարտության մատուցները որպես քաղաքական մարտավարություն

Դե Վաալը հերքում է հայկական կողմից պատմական, քաղաքական, իրավական և էթիկայի հավակնությունների գերակատարումը Արցախի կամ Ղարաբաղի հանդեպ, հետևաբար ժխտելով նաև Հայաստանի ղարաբաղցիների անկախության, ադրբեջանական էթնիկական կազմից ազատագրման նկրտումները, ինչպես նաև վերջիններիս փախուստը դեպի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջան: Ադրբեջանական քաղաքականությունը հարում է մարզինալացման, վտարման և Լեռնային Ղարաբաղի հայերի բնաջնման դեպքերին: Դե Վաալը, սակայն, հերքում է այս հանգամանքը (էջ 39-40):

Երբ բանը հասնում է ադրբեջանական քաղաքականության ցեղասպան բնույթին, Դե Վաալն օգտագործում է Չարնիի հոգեբանությունը՝ եղեռնագործության հերքման նպատակով: Չարնին առանձնացնում է 5 ենթակետ՝ (էջ 41-44)

1. Անմեղության կանխավարկած
2. Գիտականություն ի պատիվ շփոթմունքի
3. Պրակտիկ, պրագմատիզմ, ռեալպոլիտիկ
4. Գաղափարների կապակցման խեղաթուրում և ժամանակագրության շեղում
5. Անուղղակիություն, սահմանականություն և խելագարություն

6. Հավելյալ եզրակացություններ

«Սև այգին» հրատարակվել է ծավալուն մարկետինգային արշավի միջոցով: Ահա թե ինչու են կույր համարվում այն մարդիկ, որոնք չեն համաձայնում հեղինակի կարծիքին (էջ 47): Այս երևույթը տպավորություն է թողնում, թե հեղինակի կարծիքը անկողմնակալ է և չեզոք:

Վերջաբան

Դե Վաալը ճշմարտություն չգտավ ազգային առասպելից ներս կամ դրանից անդին, անկախ նրանից՝ առասպելը հայկական էր, թե ադրբեջանական: Այնուամենայնիվ, նա փոխարինեց և փոխհատուցեց հակամարտող կողմերի մասին ազգային պատումները սեփական ճշմարտությամբ:

Այնուհետև նա հաստատեց ադրբեջանական պրոպագանդայի արմատական պատմեջը: Հայկական կողմից, սակայն, նա «երևան է հանում» բացառապես այդ պրոպագանդան (էջ 50-51):

Վերջին գլուխներում Դե Վաալը ադրբեջանցիների դժվարությունները համեմատում է կիպրահույների և պաղեստինցի ժողովրդի տառապանքների հետ: Դե Վաալը համոզված է, որ «Ադրբեջանը ունի հնարավոր բոլոր լծակները Հայաստանը անապահով անորոշության մեջ թողնելու, և Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը կասեցնելու համար»: Նա ընդգծում է, որ «Թուրքիան կորսված հնարավորության ամենավառ օրինակն է: Ուրիշ մի ոչ իշխանություն չունի այդքան լծակներ այս հակամարտության հանդեպ: Անկարան խոշոր ազդեցություն ունի Ադրբեջանի վրա և մի շարք առաջարկներ Հայաստանին ընդհանուր սահմանի վերաբացումից հետո»: